Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19172

891.99
Q-51

ԱՄՊՐԷ

ՏԱՂԵՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի։
1905

891.99
Ա-51

20 JAN 2006
19 NOV 2010
ՊՐԱՎԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

08.02.2013

19172

Дозволено Цензурою. 8 Февраля 1905 г. Тифлисъ.

Պետ. հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-СССР
Ակ. Մասեանի անվ.
Ս. Սամսոնիկյանի

6122
41

Նուէր

Հ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Հեղինակից։

ԵՐԳԶԻՆ.

Հնչում են երգեր, հնչում են լարեր,
Դողն ու սարսափը մարմին են առնում,
Մարմին են առնում յոյզ, բերկրանքն ու սէր,
Ուժգին ու արագ սրտերն են թնդում։

Ողջոյն քեզ երգիչ, անմահ թագաւոր,
Քո հզօր ձայնով մեր սիրտն է դողում,
Մեր մէջ զարթում են յոյզեր անսովոր,
Վատն ու անարդը մեր միտքն են թողնում։

Ողջոյն քեզ երգիչ, քո սուրբ յաղթ ձայնով
Մենք յաղթութիւն ենք տանում չարի դէմ,
Մենք ոյժ ենք առնում յուսալիր սրտով.
Մեր մէջ ծաղկում են դարուն ու եդեմ։

Ողջոյն քեզ երգիչ, քո քնարն անուշ
Մեզ ազատում է վշտի փոթորկից,
Մենք հաւատում ենք, որ քո ձայնի ուժ
Հզօրէ չարի տհեղ մրրկից։

Ողջոյն քեզ երգիչ, քոնն է մեր հոգին,
Քոնն է մեր միտքը մեր սուրբ զգացմունք,
Քոնն են մեր սրտի ըղձերն թանգագին,
Եւ մեր բերկրանքի քաղցրաղեղ արցունք։
Քեզ ողջունում ենք քո տուած հոգով,
Քո զգացմունքով ըղձերով անգին,
Քաղցր բերկրանքի առատ արցունքով
Մաքրուած սրտով, սիրով թանգագին։
Եւ ո՞վ կարող էր քո հոգու գաղտնիք
Ըզգալ, ըմբռնել, սիրել ու գովել,
Եթէ քո հոգու ճաճանչն անդրանիկ
Չլանար խպառ մեզ լուսաւորել։

Սեպտ. 25-ին 1904 թ.

ԱՇՈՒՆ Է ԵԿԵԼ. . .

Աշուն է եկել, փչում է քամին,
Աշուն է եկել, դեղնել են ծառեր,
Աշուն է եկել, չի ժպտում երկին,
Աշուն է եկել, գնում են հաւքեր։
Ա՜յ աշնան հաւքեր, տարաբաղդ հաւքեր,
Գալիս էք շարքով երկար, անընդհատ,
Արդեօք տեսե՞լ էք իմ թշուառ աղբէր,
Արդեօք հա՞յ է նա, թէ թուրք անհաւատ։
Թէ սև գերեզման իւր լայն բերանով
Արդէն կլլել է նրա խեղճ մարմին,
Ճնշուած, անտերունչ, ծածկուած վէրքերով
Փչել է մենակ իւր տանջուած հոգին։
Հաւքեր, գալիս էք, գնում էք, հաւքեր,
Ասացէք արդեօք դեռ կա՞յ իմ աղբէր,
Դեռ չէ՞ այրուել հայրենի տնակ,
Թէ նա վաղուց է արդէն աւերակ. . .
Գալիս են հաւքեր, գնում են հաւքեր,
Երգում են տխուր, երգում են անվերջ,
Բացւում են սրտիս հինաւուրց վէրքեր,
Ներսըս լափում է մի հրդեհ անշէջ։
Աշուն է եկել, փչում է քամին,
Աշուն է եկել, դեղնել են ծառեր,
Եւ ես յուսահատ, տանջուած իմ հոգին,
Շրջում եմ մենակ, վշտերն ինձ ընկեր։
Եւ լեցուած սիրտըս թռչում է հեռու,
Դէպի հայրենի տունը աւերակ,
Դէպի հայրենի գիւղը այրուած,
Դէպի հայրենի արնաներկ վտակ. . .

Հոկտ. 3-ին 1904.

ԱՇՆԱՆ ԱՌԱՒՕՏ.

Արև ծագեց, թըռաւ ծիծեռ,
Թողեց մշուշ խորունկ ձորեր,

Հոգին ելաւ միշտ վեր, միշտ վեր,
Կեանքը դարձեալ դալիս է եռ։
Եւ ինձ անուշ ու հանդարտիկ
Հոգն է տալիս սիրով համբոյր,
Դիւթիչ ծաղիկ՝ ժպիտ ու բոյր,
Առուն՝ կարկաչ և՝ երգ թռչնիկ։
Եւ իմ սև վիշտ, գիշերուայ հետ
Վերանում է խինդ ու ժպտով,
Եւ իմ սիրտը սիրագորով
Ջեղում է յոյզ երջանկաւէտ։

Սեպտ. 15-ին 1905 թ.

ՊԷՏՔ Է ԶԳԱՍ, ՈՐ ՍԻՐԵՍ.

Պէտք է զգաս, որ սիրես
Ինչ չքնաղ է ու անհուն,
Պէտք է սիրես, որ զգաս
Դեղեցկութեան զօրութիւն։
Ես զգացի, սիրեցի,
Եւ կենսալից դեղութիւն
Դարձաւ սիրոյս առարկան
Իւր ուժով վեհ ու անհուն։
Եւ նորա մէջ տեսնում եմ
Կեանքի գարուն ու ժպիտ,
Աստուած, դրախտ ու հրեշտակ,
Եւ իմ հոգին և իմ սիրտ։

դեկտ. 12. 1903 թ.

ԱՄՊԻԿՆ ՈՒ ՀՈԳԻՍ.

Եւ վառ արևի վերջին ճառագայթներ
Ընկան նուրբ ամպի դեղեցիկ գրկում,
Նուրբ ամպը շիկնեց և նորա պատկեր,
Հալուեցաւ այդ վառ շողերի գրկում։
Եւ քո աչերից, իմ խարտեաշ անուշ,
Շողեր ցոլացին իմ հոգոյս խորքում.
Եւ հուր երազներ և տենչեր անուշ
Իսկոյն ծնուեցան իմ սրտիս խորքում։
Եւ այդ տենչերով և երազներով
Հիւծուում է հոգիս ինչպէս վարդ ամպիկ,
Եւ քաղցրութեամբ լի՝ աննման սիրով
Պաչում եմ ես քեզ, իմ անուշ փոքրիկ։

Դեկտ. 29. 1903 թ.

ԱՆՈՒՇ ԵՍ, ՔՆՔՈՒՇ.

Անուշ ես, քնքուշ, սիրուն ես, քնքուշ,
Գարուն է դէմքդ, գարուն է հոգիդ.
Շող ես երկնառաք, վարդ ես առանց փուշ,
Վիշտը չի հպել դեռ ևս քո սրտիդ։
Քեզնից բղխում են սէրն ու քաղցրութիւն,
Քեզնից բղխում են հաճոյքն ու եռանդ,
Ինչպէս արևից շողերը սիրուն,
Ինչպէս ծաղիկներ դաշտից ոգեւանդ։

Այդ շողերը սիրտս ծծել է ուզում,
Ուզում է ծծել, ասքնալ ու ծաղկել,
Եւ խեղճ աշխարհին՝ լի դառն վշտով
Կենսունակութիւն շնչել ու բուրել։

Փետ. 2. 1904 թ.

ԱՆԾԱՆՕԹ ՎԻՇՏ.

Լսում եմ խորքից, իմ սրտի խորքից շատ
խուլ աղմուկներ,
Նման անհամար թռչ ալիքների խորին աղմուկին,
Եւ այդ աղմուկով ուռչում է ճգնում իմ կուրծքս
դէպ վեր,
Մի ծանր թախիծ գրկում է լռին իմ ամբողջ
հոգին։
Ես չեմ ըմբռնում՝ թէ ինչ է պատճառ այդ
աղմուկներին,
Բայց ըմբռնում եմ. բոլոր են նոքա ամբողջ
էութեամբ,
Ես չեմ ըմբռնում՝ թէ ուր է աղբիւրն իմ մեծ
վշտերին,
Բայց շատ մեծ պահանջ, կարօտ եմ զգում ող-
բալ դառնութեամբ։

1902 թ. Հոկտեմ. 30-ին.

ՄԱՆԿԱՆ.

Քաղցրես դու, մանկիկ, չքնաղ ես, մանկիկ,
Ազատ ես վշտի դառնալիր թոյնից,
Գլուխդ է փոքրիկ ու խելքդ փոքրիկ,
Ազատ ես մարի դառն փոթորկից։
Մարմինդ է նման նորաբաց ծաղկին,
Ծաղիկ, որ նոր է տեսել երկու այդ,
Վճիտ ցօղի է նման քո հոգին,
Ունակ բաշխելու ոսկեցոլ փափաղ։
Քաղցր ես դու մանկիկ, չքնաղ ես մանկիկ,
Երանի այդպէս միայիր դու միշտ,
Բերկրանքով միշտ մեծ, իսկ խելքով փոքրիկ,
Անծանօթ միար քեզ յաւիտեան վիշտ։

ՄՕՐՍ.

Մայրիկ, ըզգում ես, ըզգում ես արդեօք,
Երբ մայրական սէր քո սիրտն էր լեցնում,
Աչքումդ արցունք, շրթիդ մանչ աղօթք
Հէգ որդուդ համար ինչ էիր խնդրում։
Դու այդ չգիտես, չես զգում երբեք,
Քեզ սև ցուրտ հողն է արդէն կուլ տուել,
Իսկ ես լաւ գիտեմ, ես քո որդիդ հէք,
Որի խեղճ սիրտը սև վիշտ է պատել։

Դու խնդրում էիր ինձ երկար օրեր,
Օրեր, որ ինձ արդ շատ անարժէք են,
Քաղդէի պարզ երկինք, քաղդէի քաղցր սէր,
Որ արդ դարձել են ինձ միայն դեհեն։
Մայրիկ կուզէի, որ դորա փոխան
Ինձ լոկ խնդրէիր երկար մանկութիւն,
Կամ մի վաղահաս, մի ցուրտ գերեզման,
Մի խուլ, մի խաղաղ անհուն լռութիւն։
Աշխարհը ժպտում է ինձ դառն դէմքով,
Ներ[illegible]ել անսիրտ ապրում են շատեր,
Ապրում են երկար, երկար միմեանց քով·
Բայց միմեանց դոց են միշտ նոցա սրտեր։
Մայրիկ կուզէի, որ դորա փոխան
Ինձ լոկ խնդրէիր երկար մանկութիւն,
Կամ մի վաղահաս, մի ցուրտ գերեզման,
Մի խուլ, մի խաղաղ անհուն լռութիւն։

Ցունուար 11. 1903 թ.

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՋԻՆ ԾԱՂԻԿ.

Ողջոյն քեզ, գարնան առաջին ծաղիկ,
Ողջոյն քեզ, մանուկ տեսքով ու գեղով,
Ես քեզ եմ նայում, սրտիս փոթորիկ
Փախչում է ինձնից կայծակի ոտով։
Ես քեզ եմ նայում և քո գեղ պատկեր

Դնում է իմ դէմ իմ սուրբ մանկութիւն,
Մանկութիւն, որի ոսկեցոլ ելթեր
Զունէր և ոչ ամպ և ոչ դէմք դժգոյն։
Ես քեզ եմ նայում և հոգոյս խորքում
Դառնում են յուշեր քաղցր մանկութեան,
Ինչպէս քո չքնաղ ամբիծ բաժակում
Հանդչում է ցողը վառ առաւօտեան։
Եւ ես այդ ժամին ժպտում եմ ուրախ,
Հրճւում եմ քեզ պէս անհոգ ու կոյտառ,
Թողնում են իսպառ ինձ «հոգոցն» ու «ախ»
Եւ ինձ գրկում է խինդը սիրավառ։
Ողջոյն քեզ ծաղիկ, իմ հոգոյս մտրիկ,
Քո մօտ դառնում է ինձ իմ մանկութիւն.
Թողնում է հոգիս վշտի փոթորիկ,
Ինձ էլ բացւում է, ինչպէս քեզ, գարուն։

Մարտ 29. 1903 թ.

ԱՆԳՈՒԹ ԱՇԽԱՐՀԸ.

Թշուառ, դէպ ո՞վ ես մեկնում քո ձեռներ,
Ո՞ւմն ես պաղատում լալագին դէմքով,
Ո՞ւմ ես բաց անում քո սրտի վէրքեր,
Եւ ո՞ւմն ես նայում խոր լքուած հոգով։
Կռունկներն եկան երկար շարքերով.
Եկան գնացին դէպ փարթամ հարաւ,
Թիա մէգը եկաւ արագ ընթացքով,

Մէկը նոցանից բաժանեց տարաւ։
Ա՜խ նա ողբում է, ծանր հառաչանք
Թեղդում է նրա և սիրտ և հոգին,..
Բայց չէ. վերջ չունի նրա մեծ տանջանք,
Մէգը անսիրտ է, ցուրտ՝ աշնան քամին։
Թշուառ դէպ ո՞վ ես մեկնում քո ձեռներ,
Մարդիկ սիրտ ունին լոկ իւրեանց համար,
Ո՞ւմ ես բաց անում քո սրտի վերքեր,
Մարդիկ դեղ ունին, բայց ո՛չ քեզ համար։

1902 թ. Սեպտ. 23-ին.

Սիրտս այրւում է, սիրտս տանջւում է,
Ինձ մի հարցնել՝ թէ «ինչ է պատճառ»,
Հոգիս եռում է, հոգիս փրփրում է,
Ինձ մի հարցնել թէ «ինչու՞ համար»։
Երբ առանց հիմքի և անիրաւ տեղ
Առնում են քեզնից ինչ որ չեն տուած.
Այդ ցաւիդ համար չես գտնում մի դեղ,
Կզգաս ինչից է իմ վիշտս ծընած։
Սիրտս այրւում է, սիրտս տանջւում է,
Ինձ մի հարցնել՝ թէ «ինչ է պատճառ»,
Հոգիս եռում է, հոգիս փրփրում է,
Ինձ մի հարցնել՝ թէ «ինչու՞ համար»։

Հոկտ. 17. 1902 թ.

ՅԱՌԱՋ ԸՆԿԵՐՆԵՐ.

Յառաջ ընկերներ, մենք արդարութեան
Հրաւէրը կարդանք ամբողջ աշխարհին,
Եւ երդւում եմ ձեզ, որ այս սրբազան
Կոչը կշարժէ անշուշտ բոլորին։
Երբ կայ մէջ տեղ վեհ նպատակ,
Յաղթանակին ծարաւ սրտեր
Գործում են լուրջ և ներդաշնակ
Ընթանում են նոցա մտքեր։
Հաւատացէք ո՛չ մի արգելք
Նոցա առաջ չի դիմանայ,
Եւ օրէ օր գործի վեհ ելք
Դէպ՝ նպատակ պիտ՝ ընթանայ։
Մեր նպատակը սուրբ ու բարի,
Լոկ մեզ կը մնայ մեր սրտեր զուրգել,
Յառաջ ընթանալ սիրով ու արի
Եւ յաղթանակի օրհներգը հնչել։

Սեպտ. 5. 1900 թ.

* * *

Դու կուրացել ես.
Իմ էութեան մէջ չես տեսնում սիրոյ
Աճող զօրութիւն։
Դու կուրացել ես.

Իմ աչքերիս մէջ չես կարող կարդալ
Սիրոյ աղերսող էջերը անհուն։
Տխմար ես դարձել,
Եւ չես ըմբռնում հոգւոյս ահաւոր
Սիրոյ մրմունջներ, սիրոյ ծանր դող,
Տխմար ես դարձել.
Չես զգում երբէք, թէ ով է տենչում
Ծծել քո ժպտի քաղցր ու վճիտ ցող։
Դու կուրացել ես.
Իմ էութեան մէջ չես տեսնում սիրոյ
Անող զօրութիւն.
Իմ աչքերիս մէջ չես կարող կարդալ
Սիրոյ աղերսող էջերը անհուն.
Դու կուրացել ես։

Օուճիսի 2-ին 1904 թ.

ՉԵՄ ԿԱՐՈՂ ՉԵՐԳԵԼ.

Եւ ես ուզեցի լռել ու չերգել
Սիրոյ երկնային անհուն քաղցրութիւն,
Եւ ես ուզեցի խսպառ չմորհել
Թէ ինչ է սէրը, նրա զօրութիւն։
Բայց կրակի պէս վառուեցաւ իմ սիրտ,
Հոգիս շարժուեցաւ ինչպէս փրփրած ծով,
Իմ դէմքից խսպառ վերացաւ ժպիտ,
Ներսը լեցուեցաւ մի անհուն տենդով։

Եւ ես ստիպուած երգեցի կրկին
Ինձնից վեր ուժի անվերջ դրդումով,
Եւ երգերովս է, որ իմ հուր հոգին
Երբեմն հանդչում է՝ լի սուրբ գորովով։

Դեկտ. 23-ին 1903 թ.

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ.

Ես սիրում եմ. և աշխարհը լի վշտով
Ինձ թւում է մի լայն եղեմ ծաղկազարդ,
Ես սիրում եմ. ինձ չեն լեցնում երկիւղով
Կեանքի բեռը, կեանքի հարցերը մութ ու բարդ։
Ես սիրում եմ. և իմ մարմին կենսունակ
Շողշողում է ուրախութեան արշալոյս,
Ես սիրում եմ. մի մեղեդի ներդաշնակ
Աւետում է ինձ գեղ գարուն, բերկրալի օր,
անվերջ յոյս։
Ես սիրում եմ. և այդ սիրով թանդագին
Միշտ առաջ եմ, առաջ անվախ ընթանում,
Սէր է ծծում, սէր է բաշխում իմ հոգին,
Զարը մոռացած՝ բարութեան եմ միշտ ձգտում։
Սև է այն սիրտ, ուր չի ծագիլ սիրոյ շող,
Ցուրտ է այն միտք, ուր սէր երբեք չի ժպտել,
Կեանք է առնում սիրով ձմրան սառն հող,
Ձեզ ասում եմ, պէտք է սիրել, անկեղծ սիրել,
միշտ սիրել։

Սեպտ. 27. 1903 թ.

ԱՄԱՌՈՒԱՅ ԳԻՇԵՐ.

Թաւալագլոր սահում է լուսնակ,
Քաղցր կարկաչ է մրմնջում առուակ,
Գեղաշուք աստղեր նայում են վերից,
Ժպտում է երկինք դէմքով կենսալից։
Ցցուած են անշարժ երկնաբերձ լեռներ,
Ծածկում է ձորը թափանցիկ ըստուեր,
Եւ թեթև հովը քաղցր դգուանքով
Շոյում է երկրին հանգստեան երգով։
Մեղմ սօսափում է և կանաչ անտառ,
Զմայլած երկնի տեսքով դեղաւառ,
Փռել է արդէն Մորիէն իւր թևեր,
Ամեն տեղ ազատ լռութիւնն է տէր։
Եւ ես էլ մենակ կտրից՝ մեղմագին
Երգում եմ երգիս կտորը վերջին,
Ինձ էլ չեն տանջում մտածմանց փշեր,
Վշտատանջ երկիր քեզ բարի գիշեր։
Քեզ բարի գիշեր և քեզ քաղցր քուն,
Քո լանջիդ վերայ որպէս զի և ես
Նիրհեմ անվրդով ու հանգիստ քեզ պէս։

1903 թ. Օգոստ. 13.

*
* *

Եւ ես սիրում եմ սիրով վառվռուն.
Սիրով, որ լի է վշտով տանջանքով,

Եւ ես սիրում եմ սիրով մի անհուն,
Սիրով, որ լի է տենդով ու կրքով։
Եւ թարմ շրթների անարատութիւն.
Կապոյտ աչերի ցոլքը կենսունակ,
Տալիս են սիրոյս նոր հուր ու դարուն,
Եւ զգացմունքի անսպառ վտակ։
Եւ ես երգում եմ. և իմ երգի մէջ
Ողջ կեանքն է խօսում ճարտասան լեզուով.
Կեանքը իւր մաշող տենչերով անշէջ,
Կեանքը իւր տենդով, վշտով, բողոքով։
Եւ ես սիրում եմ սիրով վառվռուն,
Թարմ՝ գեղեցկութիւն անարատ հոգի,
Եւ ես սիրում և սիրտս զեղուն,
Դարձել է մի ծով երգ ու բողոքի։

Դեկտ. 29. 1903 թ.

ԵՍ ԿԱՆԳՆԱԾ ԵՄ ՍԱՐԻ ՎՐԱՅ.

Ես կանգնած եմ սարի վրայ,
Սարի վրայ բարձրաբերձ,
Իմ շուրջ անտառ, իմ շուրջ ժայռեր,
Ինձ երկինքն է նոյնպէս մերձ։
Ինձ դգուում է հովը հանդարտ
Ինձ երգում է հովն անուշ,
Ինձ ժպտում է սառն վտակ,

Մանկան ժպտով ու քնքուշ։
Մի բուռն խղճ, մի բուռն տենչ
Ողողում է իմ հոգին,
Ես երգում եմ. և իմ երգին
Զայնակցում է ձորը անվերջ, ահագին։
Զայնակցում է հազար լեզուով,
Հազար ձայնով դիւրալուր,
Եւ վառում է իմ սրտիս մէջ
Նոր բերկրանքի անշէջ հուր։
Օ՜, ողջոյն ձեզ լեռներ, ձորեր,
Եւ անտառներ երկնաբերձ,
Եւ քեզ ողջոյն անամպ երկինք,
Երկինք հոգւոյս սրտիս մերձ։
Ձեր վեհ ժպտով սիրտս է ծաղկում.
Աղատութիւն եմ շնչում.
Ձեզնով հոգիս թմրած, մեռած,
Նոր յարութիւն է առնում։
Ես կանգնած եմ սարի վրայ,
Սարի վրայ ծաղկազարդ,
Ինձ երգում է կանաչ անտառ.
Առուակը՝ հեղ և մարմանդ։

Յուլիս 17. 1903 թ.

*
* *

Սև ապառաժի հսկայ կատարին
Կանգնած է բերդը հին ու կիսաքանդ,

Նայում է դէպ, ցած փրփրած ջրերին,
Ջրերին տուած իւր վիշտը ուանդ։
Սև ապառաժի հսկայ կատարին
Կանգնած եմ և ես վշտով ծանրացած,
Նայում եմ և ես կատղած ջրերին,
Ջրերին պղտոր. յուզուած ու փրփրած։
Ջրեր, ա՛յ ջրեր, տանջւում է հոգիս,
Սրտիս տիրում է ահաւոր գիշեր,
Ձեն լսում ողբը իմ ծանր սգիս.
Ոչ անսիրտ մարդիկ, ոչ երկնի հաւքեր։
Ես ձեզ եմ եկել դարձեալ այցելու,
Ձեզնից եմ խնդրում սփոփանք ու յոյս,
Եկել եմ կրկին վիշտս ձեզ տալու,
Ձեր մէջ փնտռելու բաղտիս արշալոյս։
Ջրերը փրփրած ուռչում են գոչում,
Եւ գալարւում են սև ժայռերի մէջ,
Ապա մոլեգնած յառաջ են թռչում,
Կռուելով կատղած, կռուելով անվերջ։
Եւ կարծես այդ սև ժայռերի միջից
Գոչեր են ուղղում ալիները ինձ,
«Կռուիր, միշտ կռուիր, մի փախչիր վշտից,
«Եւ կռուով վերջ տուր սրտիդ վշտերին»։
«Կռուիր, միշտ կռուիր, մի փախչիր կռուից,
«Եւ կռուով հարթիր ուղիդ փշալից,
«Կռուով ետ մղիր բաղդդ սևերես
«Եւ կռուով մաքի փառքի ասպարէզ»։

1904 թ. Յունիս 30-ին.

*
* *

Երբ խաղաղ գիշեր անուշիկ ժպտով
Գրկում է պայծառ աստղազարդ երկին,
Տերևների մէջ զով ու դողդոջ հով
Հնչում է սիրոյ քաղցր մեղեդին։
Եւ մաղձոտ լուսով լրացած լուսին
Ծածկում է երկրիս ոսկեայ շղարշով,
Մօտիկ առուակի մրմունջը խորին
Լեցնում է միտքս քաղցր յուշերով։
Թնդում է իմ սիրտ, երգում է հոգի,
Անբառ, բայց դիւթիչ ու քաղցր երգեր,
Վեր է բարձրանում տախտակը կրծքիս,
Իմ ողջ էութիւն դառնում է լոկ սէր։
Այդ սէրը հզօր, բայց կոյր հպատակ
Կենսունակութեամբ լի գեղեցկութեան
Ինձ ըստիպում է ընկնել ոտքի տակ
Նրան, որ վարդ է և սիրոյ խորան։
Ինձ ըստիպում է և նորան երգել,
Եւ երկրպագել, աղօթել երկար,
Ինձ ըստիպում է նրա մէջ փնտռել,
Երջանիկ օրեր, բարձր դաղափար։

Սեպ. 16. 1903 թ.

ԴԷՄՍ ԲԱԶՄԱԾ Է...

Դէմս բազմած է մի էակ անուշ,
Դէմս ժպտում է մի անմեղ հրեշտակ,
Այդ էակ անուշ, իւր ժպտով քնքուշ
Իմ մէջ վառում է սիրոյ սուրբ կրակ։
Իմ մէջ ծնւում են տենչեր երազներ,
Զգացմունքների մի հարուստ գարուն,
Ինձ լուռ թողնում է վշտի սև դիշեր,
Ինձ լուռ գրկում է քաղցր բերկրութիւն։
Դէմս բազմած է մի էակ անուշ,
Գարնան մի կոկոն, մի ամբիծ հրեշտակ,
Մի էակ չքնաղ, մի էակ քնքուշ,
Սիրոյ լոյն երկինք, սիրոյ արեգակ։

Փետ. 2. 1904 թ.

ՈՐՔԱՆ ԵՄ ՈՒԶՈՒՄ...

Որքան եմ ուզում, իմ գեղ անուշիկ,
Քո կրծքի վրայ դնել իմ գլուխ,
Լի երազներով քաղցր ու գեղեցիկ
Ցառել աչերիդ, այդ աչերիդ թուխ։
Որքան եմ ուզում, որ քո գիրգ մատներ,
Շոյեն իմ ճակատ ծանրացած վշտով,
Եւ քո քաղցր ձայն երգէ ինձ սուրբ սէր,
Լի սիրոյ աղնիւ ու դիւթիչ տենդով։

Եւ լուռ և խաղաղ հոգւոյս վրայից
Պիտի քաշուէին վշտի սև ամպեր,
Ինչպէս առաւօտ՝ խիտ մէգը ձորից
Եւ վառ արևից դիշերուայ ըստուեր։

Սեպ. 20. 1903 թ.

*
* *

Քո սիրտն է մաքուր, աչերդ են պայծառ,
Գլուխդ է ազատ դառն մտքերից,
Աչերդդ մէջն է որոնում աշխարհ
Եւ ամբծութիւն և սէր կենսալից։
Քո հոգին սուրբ է, նուրբ է քո մարմին,
Քո էութեան մէջ գարունն է ծաղկում,
Գարուն լի կեանքով, ժպտով երկնային,
Եւ գեղեցկութեան ուժով անպատում։
Եւ այդ կենսունակ մեծութեան առջև
Հալւում է սիրտս, սրտիս հետ հոգիս,
Այդ պատկերի դէմ վառւում է այդը
Իմ սուրբ, սիրազեղ անկեղծ ըղձերիս։

Դեկ. 19. 1903 թ.

*
* *

Ծաղիկը ունի իւր սիրոյ ընկեր,
Իւր սիրոյ ընկեր ունի և թռչուն,

Իսկ ես սէր ունիմ, ոչ սիրոյ ընկեր,
Ինձ սև է երկինք, սև է և գարուն։
Ո՜հ, ինչու, ինչու իմ քաղցր անուշիկ,
Թողնում ես դու ինձ այսպէս վշտահար,
Ինչու քու դէմքի ժպտից մեղուշիկ
Զրկում ես դու ինձ, սիրտս սիրահար։
Ախ, անտուն, մենակ. աչերիս արցունք
Շրջում եմ կանաչ պուրակների մէջ,
Ինձ հետ է իմ ցաւ, իմ վիշտ, իմ մեծ սուգ,
Եւ սէրս խանձող և սէրս անշէջ։
Երանի ձեզի երկնի վառ աստղեր,
Երանի ձեզի երկրի ծաղիկներ,
Երանի և ձեզ երկնի թռչուններ,
Դուք ունիք և սէր և սիրոյ ընկեր։
Երանի ձեզի բոլոր էակներ,
Միայն ես տանջուած՝ զուրկ քաղցր բաղից,
Ապրում եմ մենակ, անտուն, անընկեր,
Իմ օրն է երազ, իմ կեանքն է ըստուեր։

Մայիսի 25. 1904 թ.

ՔՆՔՇՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՍԷՐ.

Առանց քնքշութեան ինչ կլիներ սէր,
—Ճաճանչներ ընկած մերկ ժայռի վրայ,
Եւ սէրը արդեօք ինչ պիտի արժէր,
Եթէ վերանար ուժը գեղեցկութեան։

Նուրբ գեղեցկութիւն և նուրբ քնքշութիւն,
Սիրոյ հուր բոցեր և կենսունակ անձ
Երբոր կազմում են մի սուրբ միութիւն,
Դառնում են երկրիս ամենամեծ դանձ։
Այդ դանձը անգին, այդ դանձը չքնաղ,
Զգում է իրեն իմ սիրտն ու հոգին,
Եւ նորա ժպիտ անհուն ու խաղաղ
Դիւթում է սիրտս խորին ու ուժգին։

Դեկ. 30-ին 1903 թ.

ՄԵՆՈՒԹԵԱՆ ԽՈԿԵՐ.

Մենակ նստած եմ պատուհանի դէմ,
Ցածը գետակն է անլուռ աղմկում,
Խաղում է քամին մացառների հետ,
Մի մելամաղձոտ շշուկ է լսւում,
Ամպի ճեղքերից արևի շողեր
Ոսկեզօծում են այս ձորն, այն անտառ,
Եւ թիթռները մեծ երամներով
Խաղում են անվերջ զուարթ ու կայտառ։
Եւ անտառի մէջ ներդաշնակ ու միշտ
Լսւում է մարդու՝ թռչնի երգի ձայն,
Եւ լերան լանջին՝ հեռու իմ դիմաց
Պարիսպ է ձգում ժայռերի շղթան,
Եւ ես զգում եմ մի անհուն բերկրանք,

Մեղր հաճոյքով լեցւում է իմ սիրտ,
Ինձ վերացնում է մի խորին բերկրանք,
Մոռացած կեանքի բեռը ծանր ու բիրտ։
Բայց ահա, բոլորը կարծես շնչում են.
«Դու պիտի մեռնես անբաղդ տարաժ,
«Դու պիտի մեռնես, և տիեզերքը
«Մարդկութեան համար երբեք չի ստեղծուած»։
«Դու պիտի մեռնես,
«Եւ քո երազներ պիտ ցնդուեն խսպառ,
«Քո սրտի ըղձեր պիտ գնան, կորչեն,
«Եւ այն ինչ որ դու քրտինքով առատ
«Քեզ իւրացնելու միտ էիր դնում,
«Նոքա բոլորը. դու էլ նոցա հետ
«Պիտ կորչիք երկրի մի խուլ անկիւնում»։
Հոգւոյս տենչերը ցնդւում են խսպառ,
Եւ ինձ թւում է,
Թէ մեր կեանքը մի սին երազ է.
Դարձեալ լսում եմ. «դու պիտի մեռնես։
«Ես պիտի մեռնեմ». կրկնում եմ և ես.
Եւ հաւատում եմ,
Որ մեր կեանքը երազ է անձուկ։

Յուլիսի 1-ին 1903 թ. Տարեւ.

ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ.

Իմ լոյս, իմ յոյս, իմ արև,
Խաւարեցան շատ շուտով,
Աչքերս ուղղում եմ վերև,
Լեցուած աղի արցունքով։
Եւ երկինքը վերևից
Կարծես ասում է յուզուած,
«Դու ընկած ես իմ աչքից
«Որդի անտուն, անիծուած»։
«Քեզ համար չէ իմ արև,
«Քեզ համար չեն իմ աստղեր,
«Ոչ իմ ժպիտ անուշիկ,
«Ոչ իմ անհուն մաքուր սէր»։
«Քեզ համար է իմ անէծք,
«Կայենի պէս թափառիր,
«Անտուն, անքուն, անընկեր
«Քո բերնով քեզ անիծիր»։
«Քեզ համար է իմ պատիժ,
«Իմ բարկութիւնն ահաւոր,
«Սոդոմ ինչպէս անկուշտ լիժ,
«Քեզ էլ չկայ քաղցր օր»։
«Եւ սգաւոր ուռեներ
«Թող միշտ ողբան քեզ վրայ,
«Երբ սևաղգեստ լուռ գիշեր
«Կրկին երկրին ողջոյն տայ»։

«Եւ գլխիդ շուրջ սև բուեր,
«Վայ կարդալով թող շրջին։
«Սուդ է միայն քեզ նուէր
«Եւ տառապանք դառնագին»։
Եւ շրջում եմ տարից տար,
Կայենի պէս մեն մենակ,
Ինձ մերժում են լեռ, ձոր, քար,
Եւ աղքատի խնդճ անակ։
Ինձ մերժում է և հարուստ,
Եւ հարազատ իմ հոգին,
Ինձ մերժում է և փախուստ,
Եւ ստուերը սև շիրմին։
Իմ լոյս, իմ յոյս, իմ արև
Խաւարեցան շատ շուտով,
Դառն է իմ օր, մութ ու սև,
Սիրտս լի է, լի վշտով։

Օգոստ. 4-ին. 1903 թ. Տաթև.

ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ.

Մեղմ փչում է երեկոյեան՝ հովը հանդարտ փափկաթև,
Գարովանք է բաշխում երկրին հորիզոնից վառ արև,
Ես շրջում եմ անտառի մէջ սաղարթախիտ հովասուն,

Ինձ ժպտում են ծառն ու ծաղիկ, ժպտով անուշ
ու սիրուն։
Եւ մի շշուկ պարզ ու հնչիւն և զուարթ,
Փսփսում է իմ ականջին սրտադին,
«Երգիր ուրախ դու վշտատանջ բանաստեղծ.
«Սիրում ենք քեզ ամբիծ սիրով, սիրով անդին
ու անկեղծ»։

«Երգիր ուրախ և քո սրտում թող թնդան.
«Ուրախութեան հնչիւնները ներդաշնակ.
«Երգիր ուրախ, ուրախ հնչէ թող քո ձայն,
«Դու չես մերժուած, սիրում ենք քեզ, չես մե-
նակ»։

Եւ զարթում է իմ հոգւոյս մէջ թարմ ուժով
Վաղուց ննջած ուրախութեան զգացմունքը,
Անտառ, արև, ողջ բնութիւնն իւր ժպտով,
Ցոլանում են իմ հոգւոյս մէջ իբրև անմեղ հիաց-
մունք։

1904 թ. Յուլ. 4-ին.

ԵՐԳԵՑԷՔ ՄԱՆԿՈՒՆՔ.

Երգեցէք մանկունք, հոգիս վշտահար
Կարօտ է երգի, ձեր անմեղ երգին,
Երգեցէք մանկունք, հոգիս դալկահար
Տանջւում է վաղուց վշտով ահագին։
Երգեցէք մանկունք, իմ սիրոյ դարուն,

Դեռ նուրբ կոկոնում թոռմեց, չորացաւ,
Դէմքիս ժպիտներ խաղաղ ու սիրուն
Ինձ չուտ թողեցին, թռան, հեռացան։
Ա՜խ. այն ինչ օր էր, երբ մայրս հանդարտ
Ինձ փայփայում էր սիրալիր ժպտով,
Զունէի հոգսեր, միտքս էր հպարտ,
Կեանքն ինձ դիւթում էր ոսկի երազով։
Եւ անմեղ հոգիս մաքուր ծաղկի պէս
Առաւօտներ էր միայն երազում,
Եւ մեղր տենչեր՝ բաղդս քաղցր ու հեզ
Իմ հոգւոյս մէջ էր անընդհատ դիզում։
Երգեցէք մանկունք, ձեր քաղցր երգեր
Թող դան, օրօրեն հոգիս վշտահար,
Սիրտս չորացած, սիրտս առանց սէր,
Սիրտս արնաներկ, սիրտս դալկահար։
Երգեցէք մանկունք, ձեր երգն է միայն
Բարեկամի պէս հոգիս ողջունում,
Եւ սիրտս դգւում, և սէրս երգում,
Եւ իմ սև հոգին սրբում ու մաքրում։

Հոկտ. 4-ին. 1904 թ.

ԴՈՒ ՉԳԻՏԵՍ...

Դու չգիտես ինչն է յուզում իմ հոգին,
Երբ հնչում է մահուան զանգը տխրագին,

Եւ ձմեռուայ թեւերի տակ սգաւոր
Լուռ գնում է դեպ գերեզման մի թափոր։
Դու չգիտես, ինչն է յուզում իմ հոգին,
Երբ ցուրտ քամին հեծեծում է տխրագին,
Եւ թափորը թաց աչքերով լռելեայն
Շուտ ծածկում է նոր մեռածի գերեզման։
Դու չգիտես և ինչքան խոր, ինչ ուժգին,
Սիրտս է զողում դառնակսկիծ ցաւագին,
Երբ մենացած նոր գերեզմանն այդ անշուք
Պահ է ծնում ցուրտ ձմեռուան սառակաքուք։
Ա՜խ, իմ անուշ հուր խոկերի գեղ կոկոն,
Թոռոմեցաւ դեռ չսառացած սիրոյ ձոն,
Եւ տխրութեան թեւերի տակ, լուռ անձայն,
Դառաւ, թոռմած, իւր սգաւոր գերեզման։
Այդ գերեզման սրտիս խորքում մենացած
Ցաւ է տալիս նա իմ հոգւոյս խոր խոցուած,
Եւ յուշերս սևազգեցիկ անդադար
Արտասուում են գիշեր ցերեկ իւր համար։
Դու չգիտես ինչն է յուզում իմ հոգին,
Երբ հնչում է մահուան զանգը տխրագին
Եւ լռելեայն և հանդարտիկ և մենակ,
Ցեռ է դալիս 'մ հոգւոյս մէջ սիրոյս ծաղկի յիշատակ։

Յուն. 16-ին 1905 թ.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՌ
Ա. ՄԱՍԻՍՅԱՆ
Ի. ՍԵՄՍԼԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Է 10 Կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0322633